ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2021 թվականի N 2111 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1446-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի «Ոստիկանության ծառայողի համազգեստի նկարագիրն ու այն կրելու ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 4-ի N 886-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1446-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 3-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի զինծառայողների և» բառերը.

2) որոշման N 1 հավելվածում՝

ա. 93-րդ կետը «բացառությամբ» բառից հետո լրացնել «պարեկային ծառայության և» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 93.2-րդ կետով.

«93.2. Պարեկային ծառայության ստորաբաժանման ծառայողները համազգեստի աջ թևքին՝ ուսակարից 60 մմ ներքև, կրում են իրենց ծառայությունը խորհրդանշող թևքանշան: Թևքանշանը՝ 80 մմ x 125 մմ չափսերով, սև կտորի վրա գունավոր ասեղնագործվում է ուղղահայաց եռագույնը (Հայաստանի դրոշի գույներով՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն), կենտրոնում թուր՝ սև և արծաթագույն, որից ներքև թագ՝ սև և արծաթագույն: Թևքանշանի մեջտեղում սև ֆոնի վրա արծաթագույն ասեղնագործվում են «ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը, իսկ վերևում՝ եռագույնի վրա, սպիտակ գույնով ասեղնագործվում է «PATROL» բառը: Թևքանշանից վերև, կարմիր առանձին կտորի վրա կիսաշրջանաձև, սպիտակ գույնով ասեղնագործվում է՝ Պարեկային ծառայության Երևան քաղաքի ստորաբաժանումների ծառայողների համար «ԵՐԵՎԱՆ» բառը, իսկ մարզային ստորաբաժանումների ծառայողների համար համապատասխան մարզի անվանումը:

».

3) որոշման N 1 հավելվածը լրացնել 8-10-րդ գլուխներով՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշման N 2 հավելվածը լրացնել 6-9-րդ նորմաները սահմանող աղյուսակներով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանել ոստիկանության զորքերի զինծառայողին և պարեկային ծառայության ծառայողին համազգեստ տրամադրելու, այն կրելու կարգն ու պայմանները:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության զորքերի զինծառայողի և պարեկային ծառայության ծառայողի՝ սույն որոշմամբ սահմանված նոր համազգեստներին անցումն իրականացնել փուլերով՝ ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի կողմից հաստատված ժամանակացույցի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ